



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3242

Удмуртский язык

Удмуртский язык

202

12.168

09-11

Удмуртский язык

1891

2011

6117

Ա. ԱՆՆԵՆՍԿԱՆԱ.

89171

Ա - 68

ՄԵՇ ԳՈՅՐԸ

Թարգմ.

559

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ա. ԱՐԲԱՋԵԱՆՅՑ.

100K
6925
9



ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈՒ

ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՅԻ:

1891

5812

Handwritten signature

შეცვლილ

2003

Доволено цензурою. Тифлисъ, 1 Октябръ 1891г.

Типографія К. С. Саноянца, Александрополь,

Бебутовская ул., соб. д.

* * *

Պիտր Իվանովիչ Սոլսկու մեծ՝ և պայծառ
լուսաւորուած սեղանատնում, թէյի սեղանի շուր-
ջը հաւաքուել էր նրա ամբողջ ընտանիքը, որ
բաղկանում էր կնոջից, տասնամեայ դուստր Մա-
շայից և երկու փոքրիկ՝ հինգ և չորս տարեկան
արու զաւակներից: Կինը մի բանի վերայ
մտածում էր թէյի բաժակը ձեռքին, իսկ այդ
ժամանակ որդիքը իրար մէջ շարունակում էին
մի իրարու հակառակ խօսակցութիւն:

— Միտեա, նկատեց Մաշան փոքր եղբօրը
հրամայողական ձևով, դու դարձեալ թէյը գը-
ղալով ես խմում: Է՞ որ մայրիկը հրամայել է
քեզ բաժակով խմել:

— Քեզ ինչ, ես այսպէս եմ ուզում, դու խօսմ

մայրիկ չես, պատասխանեց մանուկը անբաւական ձայնով:

— Ես բեղ ասում եմ բաժակով խմիր, ձայնը բարձրացրեց Մաշան. ահա ես կառնեմ զրդալը ձեռքիցդ: Եւ նա ձեռքը երկարացրեց եղբոր գգալին:

— Չեմ տալ, իմնէ գգալը, դռնեց Միտեան:

— Կրկին դուք կռւում եք, երեխայք, մէջ մըտաւ մայրը—Սօֆիա Իվանովնա Սօլկայեան:

— Մայրիկ, Մաշան իլում է գգալը:

— Մայրիկ, Միտեան գարձեալ թէյը բաժակով չի խմում—միասին գանգատուեցին երեխայքը:

— Հանգիստ թող դրան, Մաշա, խիստ ձայնով ասաց Սօֆիա Իվանովնան: Իսկ դու, Միտեա, խմիր թէյդ այնպէս, ինչպէս մեծ երեխայքն են խմում. տես, հայրիկը գալիս է. բեղ համար ամօթ կ' ընի, որ նրա մօտ փոքր երեխայի նման ես խմացնեմ բեղ թէյդ:

Երեխայքը հանդարտուեցան: Այդ ըոպէին սննեակը մտաւ Դմիտր Իվանովիչը ձեռքումը մի բաց նամակ բռնած: Նա նստեց կնոջ մօտ:

— Ես ահաւասիկ Լիդիա քրոջնցս նամակ ըստացայ, ասաց նա կնոջը. նա մտադիր է Ս.Պե-

տերբուրդ տեղափոխուել:

— Ումինց, հայրիկ, Լիդիայից. հարցրեց մեծ որդին:

— Մի խառնուէր ուրիշի գործի մէջ, Պետեա, նկատեց եղբօր Մաշան. դու տեսնում ես, որ հայրիկը մայրիկի հետ է խօսում:

— Դու, կա՞ծես, անբաւական ես երևում դրանից. ասաց Սօֆիա Իվանովնան ամուսնուն:

— Ոչ, ինչո՞ւ, ինձ համար միենոյն է:

— Միենոյն է, բայց անցեալ տարի, երբ քո փոքր քոյրդ, Լիդան, գալու էր Ս.Պետերբուրգ մի ամսով, դու ուրախու թիւնիցդ խելբդ թոցնում էիր:

— Այն Լիդան էր, այն բոլորովն ուրիշ բան էր:

— Ի՞նչպէս.

— Ես այդ յետոյ կ' պատմեմ բեղ. պատասխանեց Դմիտր Իվանովիչը, նշան անելով, որ չի կամենում խօսել փոքրների մօտ, որոնք սկսել էին ուշադրութիւն դարձնել ծնողաց խօսակցութեանը:

Թէյից յետոյ երեխայքը գնացին քնելու, Մաշան սկսեաւ սրտում սկսեց շալել նոր գրած

պատկերները, իսկ Սօֆիա Եփեսոսցի մանուկները հետ զնաց նրա առանձնասենեակը:

— Դէ՛հ, ինչ որ ուզում էիր պատմել Լիզիա քրոջը մասին, պատմիր: Կնչո՞ւ դու նրան այնպէս չես սիրում, ինչպէս Լիզային. մի՞թէ նա վատ կին է:

— Ո՛հ, ոչ. թէև ես վաղուց է նրան չեմ տեսել, բայց նրա մասին զոնէ մի վատ լուր էլ չեմ լսել.— նրան չ' սիրելս, իմ մանկութեան օրերի տպաւորութիւնիցն է:

— Բայց և այնպէս, պատմիր, ես շատ եմ ցանկանում քո մանկութեան պատմութիւնը լսել:

— Եթէ դու այդքան ցանկանում ես իմանալ համեցէք, ես կ' պատմեմ: Իմ պատմութիւնից դու կ' հասկանաս, թէ ինչո՞ւ ես Լիզային այնքան չեմ սիրում, որքան Լիզային:

«— Երբ մայրս մեռաւ, ես վեց տարեկան էի, Լիզիան— տասներեք, իսկ Լիզան— չորս: Հայրս հարուստ չէր, և չէր կարող մեզ համար մի տընային դաստիարակչու հի վարձել, իսկ ինքը մեզ վերայ քիչ ուշադրութիւն էր դարձնում: Լիզիան մի այնպիսի մտածող, աշխատասէր և մաքրասէր աղջիկ էր, որ երբէք մեծերի հսկողութեա-

նը չէր կարօտում: Նա սկսեց պարապել մեր անայրին աշխատութեամբ և, ինչպէս ասում էին, այդ գործում բաւականին յաջողութիւն ունէր: Մեր բոլոր ազգականները և ծանօթները հիանում էին նրա վերայ, հայրս շատ էր գովում նրան, բայց միայն ես և Լիզան նրանում աւելի պակասութիւններ էինք տեսնում, քան արժանաւորութիւններ: Մենք բոլորովին նրա ձեռքի, նրա լիակատար իրաւունքների տակն էինք և, Աստուած իմ, ինչպիսի աններել խստութեամբ էր կռոււթարում մեզ այդ, ըստ երևոյթին, խաղաղ աղջիկը: Նա մի ժիր, ուրախ, կրքոտ, մի քիչ էլ ինքնակամ երեխայ էի: Լիզիան, կամենում էր ուղղել իմ պակասութիւնները, բայց որովհետև դեռ ևս ինքն երեխայ էր և, իհարկէ, չ'գիտէր, թէ ինչպէս պէտք է հասնէր իւր նպատակին. ուստի և հաւանական է, որ իւր խստութեամբ նա ինձ օգուտի փոխարէն, տալիս էր միայն վնաս:»

Այդ բոլորին սեղանատունը առանձնասենեակից բաժանող վարագոյրը բարձրացաւ, և Մաշան կամացուկ քայլերով մտաւ հօր առանձնասենեակը. նկատելով, որ հայրը մի ինչ որ բան էր պատմում մօրը, աղջկը կամեցաւ լսել այդ և ծա-

Տուկ նստեց հօր քաղկաթոտի ետևը, յատակի վերայ:

«— Ախրիան ցանկանում էր, շարունակեց Գովար Իվանովիչը, որ ես անպատճառ յարգեմ և լսեմ իշան, ինչպէս մօրս, իսկ ես նրան համարում էի ինձանից մեծ, բայց մի խեղճ աղջիկ, որ իմ ներկայութեամբ ստանում էր շատ յանդամանութիւններ վարժուհուց, որը դալիս էր նրան և ինձ դասեր տալու: Պատահում էր, երբ մայրս մի որ և է յանձանքիս համար ինձ կանգնեցնում կամ առանց քաղցրեղէնների էր թողնում, ես շատ էի բարկանում, բայց երբէք ինձ անպատուած չէի համարում:

«— Նա մայրիկ է, դատում էի ես, ինչպէս և հաւանական է, որ դատէին ուրիշ մանուկներ, նա իրաւունք ունի պատժելու: Բայց երբ Ախրիան մի անգամ ասաց ինձ հանդարտ, բայց— խիստ ձայնով, ինչպէս առհասարակ նա խօսում էր ինձ հետ.

«— Դու կրկին պահարանի վերայ ես բարձրացել, երբ ես այդ քեզ չեմ հրամայել. իջի՛ր իսկոյն և կանգնի՛ր անկիւնը, անհնազանդ երեխայ— ես սկսեցի ծիծաղել նորա վերայ. ես իս-

կապէս չէի կարող համոզուել, որ մի աղջիկ, որը ինքը անկիւնը չէր կանդնում միայն նրա համար որ պատժող չկար, կարող էր պատժել ինձ: Ես էլի շարունակում էի նստել պահարանի վերայ, ծիծաղելով և ծաղրելով քրոջս: Նա իմ ծիծաղես չէմ ոչ մի խօսք չ ասաց, և ես նկատեցի, որ մի բան է որոնում սենեակի մէջ: Մի քանի բուրդեցի յետոյ նա ինձ ցոյց տուեց մի բանալի և նոյն հանդարտ ձայնով ասաց ինձ.

«— Քո բոլոր խաղալիքների փակած են պահարանում: Դու չես ստանալ զրանցից և ոչ մի հատը, մինչև որ ինձանից ներողութիւն չ խնդրես և մի ժամ չ կանդնես անկիւնում:

«— Դու իրաւունք չունիս փակելու իմ խաղալիքներս, դու իրաւունք չունիս ինձ պատժելու, գոչեցի ես, վայր ցատկելով պահարանի վերայից և վազելով դէպի քոյրս. տուր ինձ բանալին, չար աղջիկ:

«— Ախրիան ինձանից ուժեղ էր. նա հսկեց և գցեց ինձ հարեան սենեակը և դուռը փակեց բանալիով: Մինչև հիմայ ես չեմ կարող մտնանալ թէ որ աստիճանի կատարութեան էր հասել իմ բարկութիւնս այդ բողբոջում: Ես ծե-

ծում էի դուռը բռունցքներով, լալես, բղաւում, հայհոյում էի և սպառնում ջարդ ու փշուր անել բոլոր այն առարկաները, ինչ որ կային սենեակում, մինչև անգամ վառելտունը. . . , բայց Լիդիան ամենևին ուշադրութիւն չէր դարձնում ինձ վերայ:»

— Եւ երկար մնացիր այդ բանտի մէջ. հարցրեց Սօֆիա Իվանովնան:

«— Ուղիղը չեմ յիշում. այն ժամանակ ինձ շատ երկար էր թփում, բայց իսկը ասել երկու կամ երեք ժամ, մինչև որ ես բողբոլվին հանդարտուեցի: Լիդիան բաց արաւ դուռը և հարցրեց ինձ, թէ համաձայն եմ ես արդեօք մի ժամ կանգնել անկիւնում:

«— Իրբէք, վճռողական ձայնով պատասխանեցի ես. կ'անց, հայրիկը կ' դայ, ես կ' դանդաուում իմ նրան:

« Բայց և այս չ' յաջողուեցաւ ինձ: Հայրս վերադարձաւ տուն և դեռ՝ իւր սովորութեան համաձայն՝ մեզ չ' զգուած և չ' համբուրած, Լիդիան հարցեց նրան:

«— Հայրիկ, ասա խնդրեմ, կարող եմ արդեօք պատժել Դմիտրին, երբ նա ինձ

չ' լսէ.

«— Իհարկէ, կարող ես, պատասխանեց հայրս և յետոյ աւելացրեց դառնալով դէպի ինձ, Դմիտր, յիշեր որ քոյրդ մօրդ է փոխարինում, դու պէտք է լսես նրան այնպէս, ինչպէս լսում էիր հանդուցեալ մօրդ, այն ժամանակ և ես կ' սիրեմ քեզ. եթէ քոյրդ քեզ պատժում է, այդ քո օգտի համար է, չէ՞ որ նա քեզ սիրում է:

« Սյուպիսի պատասխանի ես հօրիցս չէի ըստ պատում: Միթէ Լիդիային թոյլատրուած է ինձ պատժել: . . . Ես ինձ համարում էի բողբոլվին անբախտ երեխայ և դառնապէս հեկեկում էի: Հայրս այդ օրը մի ինչ որ բանով զբաղուած էր, այնպէս որ ժամանակ չունէր ինձ մտիթարելու: Նա հրամայեց ինձ, որ չ' խանդարեմ իրան և դադարիմ լաց լինելուց, իսկ երբ ես նրան չ' լըսեցի, նա առանց երկար մտածելու ինձ ուղարկեց միւս սենեակը: Ստանալով հօրս թոյլատրուութիւնը, Լիդիան սկսեց համարեա ամեն օր պատժել ինձ: Նա լաւ գիտէր, որ ես այնքան հնազանդ չէի, որ նրա հրամանի համաձայն կանգնեի անկիւնում, կամ չըբէի ծնկներիս վերայ, և դրա համար նա գործադրում էր ուրիշ հնարք-

ներ. նա ինձ նախաճաշիկ կամ ճաշ չէր տալիս, զբօսներու չէր թողնում, փակում էր ինձ միայնակ մի ուրիշ սենեակում, պահում էր խաղալիքներս և երբեմն էլ դուրս էր գցում նրանցից մէկը, կամ վառում էր: Կնչպէս այժմ մտաբերում եմ, ես ունէի մի մեծ, կաշուց շինած հուսար, որին ես շատ էի սիրում: Մի անգամ երեկոյեան, երբ ես երկար ժամանակ խաղում էի նրա հետ, Կիզիան երկու անգամ խիստ ձայնով յիշեցրեց ինձ, որ քնելու ժամանակ է, բայց ես նրա խօսքերի վերայ ուշադրութիւն չ' դարձրի և շարունակեցի խաղալ:

« — Դիմիտր, ես երկու անգամ հրամայեցի քեզ դնալ քնելու, ասաց այն ժամանակ քոյրս. եթէ դու այս անգամ ևս չ' լսես ինձ, հուսարդ այլևս չես տեսներու. դնա քնիլ:

« Ես այդ անգամ նոյնպէս չ' լսեցի նրան և, երբ բաւականին խաղացի, գնացի քնելու, իսկ հետեւեալ առաւօտ, որքան որոնեցի, չ' կարողացայ գտնել հուսարս: Ես լալիս և խնդրում էի Կիզիային, որ սոց ինձ հուսարս, բայց նա մնաց անուշադիր իմ խնդրքին և լացին: Երբ հայրս եկաւ, ես վազեցի նրա մօտ և արտասուքք աչ-

քերիս յայտնեցի նրան կոյտոնիս մասին:

« — Բաւական է, Դիմիտր, կտրեց ինձ Կիզիան, մի անհանգստացնիր հայրիկին դադարկաբանութիւններովք: Եթէ դու քեզ լաւ պահես, ես քեզ կ' դնեմ մի նոր հուսար այն փողերով, որ հայրիկը տալիս է ինձ մեր տան վերայ ծախսելու համար:

« Հայրս կարծեց, թէ այս մխիթարութիւնը բաւական է ինձ և: այլ ևս չ' զբաղուեց ինձանով: Հուսարս չ' գտնուեցաւ: Յետոյ ես լսեցի, որ նա առաւօտեան, մինչ դեռ ես քնած եմ եղել, գցել է վառարանի կրակի մէջ, իսկ նորը, իհարկէ, չ' գնեց, որովհետեւ ես ինձ միշտ վատ էի պահում:

— Հաւատալ անգամ չէ կարելի, որ մի տաներեք յարեկան ազնիկ այդ աստիճան չար լինի, գոչեց Սօֆիա Եվանովնան:

« — Ո՛չ, նա չար չէր, պատասխանեց Դիմիտր Եվանովիչը: Երբ Կիզան կամ ես հիւանդանում էինք, նա շատ ջերմեռանդօրէն հոգս էր բաշում մեզ վերայ. նա նոյնպէս աշխատում էր, որ մենք ունենանք ամեն կարեւոր իրերը. շատ անգամ, երբ հայրս քիչ փող էր ունենում, Կիզիան

ինքը ման էր գալիս պատառոտած, կամ ցնցոտի գլխարկով, իսկ մենք միշտ ունենում էինք լաւ կոշիկներ և գլխարկներ: Միշտ մինչև կէս գիշեր ասեղը ձեռքին նա կարում, կարկատում էր մեր հագուստները և ոչ ոքի չէր թողնում, որ մեզ անպատուէ: Յիշում եմ, երբ մեր աղախինը չարութեանս համար ինձ «լերբ» անուանեց և կոպտութեամբ դուրս արաւ խոհանոցից, Լիզիան նրան խիստ յանդիմանեց և զանգատուեցաւ հօրս. հէնց հետեւեալ օրը հայրս նրան արձակեց: Ոչ, Լիզիան չար չէր, թէև փոքր ժամանակս նրան չար էի կարծում: Նա ցանկանում էր, որ մենք իր խօսքով շարժուինք և ամեն բանում իրան լսենք: Նա չէր հասկանում, որ փաղաքշանքով և սիրով իրան աւելի հեշտ կ'լինէր մեզ հետ վարուիլ, որ նրա խստութիւնը աւելի է զայրացնում ինձ նման մի չար երեսալի: Նա կարծում էր, թէ իրան անպատուած կլինի, եթէ մեզ հետ խաղայ կամ ծիծաղի: Մեզ հետ միշտ խիստ, հրամայողական ձայնով էր խօսում: Երբ մենք մեր խաղալէքների մասին մի ինչ որ հարցնում էինք նրան, նա իսկոյն հրամայում էր մեզ լռել, ասելով. «բաւական է

յիմար-յիմար դուրս տաք. դուք տեսնում էք, որ ես զբաղուած եմ: Իմ ինչ գործն է ձեր խաղալէքների մասին խօսել.» և մենք իսկոյն լռում էինք կամ գնում մի այլ մեր խօստասիրտ բողջեց հեռու՝ տեղ շարունակելու մեր խօսակցութիւնը:

«Որքան ես մեծանում էի, այնքան աւելի անտանելի էր դառնում Լիզիային ինձ հետ վարուել պատիժների միջոցաւ: Ես այնպէս էի կատաղում, այնպիսի աղմուկ, աղաղակ էի բարձրացնում պատժուելու ժամանակ, որ շատ անգամ բոյրս ինձ զիջանում էր, այսինքն, նշանակած ժամանակից աւելի շուտ էր բաց անում բանդիս դռները, վերադարձնում էր խլած խաղալէքներս և այլն, և այլն. . . Այն ժամանակ Լիզիան հնարեց ինձ չարչարելու մի ուրիշ՝ աւելի ներգործող՝ միջոց: Ես հօրս սիրելին էի և ինքս, դեռ մօրս կենդանութեան ժամանակից, նրան ամեն բանից առաւել էի սիրում: Ոչ ոքի հետ ես չէի սիրում այնքան խաղալ և խօսել, որքան նրա հետ. ոչ մէկին իմ մանկական ցանկութիւններս չէի յայտնում, բացի նրանից: Մօրս մահից յետոյ, հայրս շատ քիչ անգամ էր մնում

Մեծ քոյրը.

Այն խօսակցութեանը իսկուհի էր որ
տեսնուած էր որպէս ինչ անհասկացիկ

տանը. նա դիւրագրգիռ և բարկացող էր և մեզ մօտ համարեա երբէք չէր լինում: Բայց սրտի ուրախ ժամանակ նա շատ էր սիրում ինձ հետ խաղալ, թոյլ էր տալիս հեծնել իրա վերայ և պատմում էր ինձ հեքեաթներ: Այդ ժամերը ինձ համար կատարեալ տօն էին: Նս անդադար խօսում, ծիծաղում, և փաղաքշում էի հօրս: Նթէ ես իմ այդ ամենաերջանիկ ընդհանրում պատմէի հօրս, թէ ինչպէս է վարւում Ղիզիան ինձ հետ, գուցէ նա ինձ ուշադրութեամբ լսէր և աշխատէր լաւացնել մեր ընտանեկան կեանքը: Բայց բանը նրանումն էր, որ երբ հայրս ինձ հետ ուրախ խաղում էր, ես բոլոր վշտերս մոռանում էի: Թէև ես դիւրագրգիռ էի, բայց չարախնդիր չէի: Պատահում էր, երբ առաւօտեան Ղիզիան ինձ վշտացնում էր, ես նստում և մտածում էի. «կ'սց, հայրիկը կ' գայ, ամենամեն ինչ նրան կ' պատմեմ, կ' խնդրեմ, որ նա որտեղից որ է մեզ համար մի մայր ձարէ, իսկ գարշելի Ղիզիային դուրս անէ տանից:» Բայց հէնց որ բազի զանգակը հնչում էր, ես դուրս էի վազում տեսնելու թէ ով է, տեսնում էի հօրս, որը ժպտալով ինձ ասում էր. «բարև, չարաճճի,

ինչ է, շնո չարութիւններ ես արել,» և իմ բոլոր վշտերս իսկոյն անհետանում էին. ես փաթաթվում էի նրա վզովը, նա ինձ նստեցնում էր իւր ուսերին և այսպէս ման էր ածում սենեակի մէջ: Նս այդ ժամանակ ուրախ էի, անբացատրելի կերպով ուրախ. ոչ որի վերայ չէի չարանում և մոռանում էի Ղիզիային դուրս անելու ցանկութիւնս: Նոյն իսկ հիմայ էլ, թէև արդէն 30 տարի է անցել, ես մեծ բաւականութեամբ եմ յիշում իմ մանկութեան այդ երջանիկ ընդհանրը, և անիծում եմ քրոջս, որը շատ անգամ զրկում էր ինձ այդ բաւականութիւնից: Տեսնելով, որ այլ ևս ինձ պատժել չի կարելի, որովհետև ես կամ սաստիկ կատաղում էի, կամ արտաբուստ ցոյց էի տալիս, որ իբր թէ, ուշադրութիւն չեմ դարձնում ստացածս պատիժներին և չեմ տրտնջում այն խաղալիքների համար, որոնք ձեռքիցս խլում էր, Ղիզիան սկսեց ինձ վերայ զանգատուել հօրս: Հէնց որ հայրս գալիս էր տուն և պատրաստվում էր ինձ զրկուել, Ղիզիան նրան իսկոյն կանգնեցնում էր.

«— Հայրիկ, ասում էր նա. գուցէ դուք այդչափ չ' սիրէք և չ' զգուէք Դմիտրին, եթէ

Դմիտրի նա այդքան սիրելի էր, որ կամէի ես
ուսերի պրայ արեւ Ինչպէս է «Իշում այդ
Ինչպէս Ինչպէս Ինչպէս Ինչպէս Ինչպէս

էր նա սովորաբար, ե՛կ այստեղ հաշտուինք. խօսու-
տացիր, որ այլ ևս յիմարութիւններ չես անելու:»

« Բայց ես իսկոյն չէի գնում: Ուրիշները ինձ
պատճառած վիշտն աւելի շուտ էի ներում, քան
հօրս, գուցէ նրա համար, ու նրան շատ էի սի-
րում: Եւ քնաւորութիւնս մայրս դիտէր և կարո-
ղանում էր մէկ փաղաքշական խօսքով ինձ հան-
դարտացնել, իսկ հայրս կարծում էր թէ ես կա-
մակորութիւն եմ անում, և բարկանում էր:

« — Ի՞նչ ես նստել գայլի նման, ասում էր նա
խիստ ձայնով, չ' լսեցիր, որ ես քեզ կանչում
եմ:

« Եւ ես ստիպուած մօտենում էի, ոչ թէ
սիրով և ուրախութեամբ, այլ ահ ու դողով:

« — Պիտի անեմ այն, ինչ որ նա հրամայում
է, մտածում էի ես. եթէ ոչ նա կրկին կ' բար-
կանայ և կ' հայհոյէ, ինչպէս քիչ առաջ: Եւ ես
առանց զիմադարձութեան կատարում էի նրա
բոլոր հրամանները, բայց նա նկատում էր, որ
ես իմ մէջ չարանում եմ և այս զայրացնում
էր նրան: Վերջանում էր նրանով, որ նա, վեր-
ջապէս, հեռացնում էր ինձ իրանից, և ես ըս-
տիպուած էի մի քանի օր շարունակ նրանից

հեռու մնալ:

« Պատահում էր, որ այս դէպքերը շուտ-
շուտ կրկնվում էին: Վերջապէս, մի անգամ հայրս
համբերութիւնից դուրս եկաւ և ասաց ինձ.

« — Դու չես կամենում լսել իմ խօսքերս,
չես կամենում ուղղուել և քեզ պահել՝ ինչպէս
հարկն է, անպիտան երեխայ. ուրեմն լսիր, ինչ
եմ ասում քեզ, այսօր երեքշաբթի է, եթէ մին-
չև կիւսակի քոյրդ թէկուզ մէկ անգամ ևս գան-
դատուի քեզ վերայ, պատուաւոր խօսք եմ տա-
լիս, որ քեզ սաստիկ կ' թակեմ:

« Ես սաստիկ վախեցայ: Մինչև այդ ժամա-
նակ ես չէի ծեծուած և կարծում էի, որ աշ-
խարհումն ծեծուած լինելուց աւելի ամօթալի
և վատ բան չկայ: Բայց և այնպէս, ես հօրս խօս-
քերից հասկանում էի, որ նա լուրջ է ասում և
անկաթեք իւր խօսքը կ' կատարէ: Ես բոլոր
կարողութեամբս աշխատում էի ինձ լաւ պահել
մինչև անգամ քործս աղերսում էի, որ նա չ' գան-
դատուի ինձ վերայ: Չորեքշաբթի և հինգշաբթի
օրերում ամեն ինչ լաւ անցաւ: Ուրբաթ օրը
անկողնիցս վեր կացայ բաւականին լաւ տրամա-
դրութեամբ: Սկաւ ինձ և Վիդիային դասատու.

վարժուհին: Ես այդ օրը շատ լաւ սովորեցի, նա գովեց ինձ. այդ աւելի ուրախացրեց ինձ: Երեւակայում էի, թէ ես ինչպէս պէտք է պարծենամ հօրս մօտ իմ յառաջադիմութեամբս, ինչպէս նա պէտք է գովաբանէ և կարելի է, առաջուայ նման կ' սկսի փայփայել ինձ. ես այս մըտքիս հետ վազում և թռչկոտում էի սենեակում: Նշանակը վատ էր, մենք զբօսելու չ' գնացինք. ես վեր առայ գնտակս և սկսեցի ընդունարանում խաղալ:

« — Իմիտր. գօչեց ինձ վերայ Լիդիան, ընդունարանում գնդակ մի խաղա, մի բան կ' կոտորես:

« — Չեմ կոտորի. քիչ էլ խաղամ. պատասխանեցի ես, շարունակելով խաղալ:

« — Դիմիտր, լսիր ինձ, իսկոյն դուրս եկ այդ տեղեց. աւելի խտուութեամբ հրամայեց քոյրս:

« — Մէկ անգամ էլ. . . Ես շտապեցի. գրնդակը դուրս թռաւ ձեռքիցս կարաւ ապակուն և փշրեց: Ջարդուած ապակու ձայնին ներս վազեց Լիդիան:

« — Ես դեղեցիկ, ասաց նա. մտաբերում ես անցեալ օրը ինչ խօստացաւ հայրիկը:

« Ես մտաբերեցի բոլորը և սփրտնեցի. . .

« — Լիդիա, սիրելիս, ընկայ ես քոջս ոտքերը, ինդրում եմ մի' ասիր հայրիկին:

« — Միթէ ես կարող եմ չասել նրան, սառնութեամբ պատասխանեց նա. հայրիկը անպատճառ կ' հարցնի, ո՞վ ջարդեց ապակին, ես ինչ ասեմ նրան:

« — Աղանեակս, հոգեակս, մի ասիր, որ ես քեզ ականջ չարի, մի գանդատուիր ինձ վերայ. չէ՞ դու զիտես, որ նա կամենում է ինձ թակել:

« — Եստ էլ լաւ կ' լինի. դու ինձ երբէք չես լուծ, պատիժներս ոչնչի տեղ չես դնում, թող գոնէ մէկ անգամ հայրիկը մի լաւ քեզ սովորեցնէ, կարելի է այն ժամանակ դու ուղղուես. պատասխանեց անխիղճ Լիդիան:

« — Ես առանց ծեծի կ' ուղղուիմ, խօսք եմ տալիս, Լիդիա, խօստանում եմ, ես այսուհետեւ միշտ կ' լսեմ քեզ, միայն թէ մի' գանդատուիր հայրիկին այսօր:

« Լիդիան լուռ էր, բայց ես նրա դեմքի արտայայտութիւնից ոչինչ չէի կարող յուսալ: Միայն չէի դադարում խնդրելուց և լաց լինելուց. մինչև անգամ փայփայում էի նրան, որ երբէք

արած չէի: Նա կամաց դէն էր հրում ինձ, և շարունակում իւր դործով զբարուելը, կարծես ես նրան խանգարող մի աներես ճանձ լինէի:

« Ժամանակը անցնում էր. ճաշի ժամը հասաւ. բակում ձայնեց զանդակը. ես դուրս չ' դրնացի հօրս դիմաւորելու, ընդհակառակը, կուչ եկայ սենեակի յետին անկիւնում: Աիդիան, Աիդայի ձեռքից բռնած տարաւ սեղանատունը: Մի՞թէ նա կ' զանդատուի, ո՛չ անկարելի է, նրա սիրտը այքան չար չէ, մտածում էի ես: Բայց ահա հայրս բղաւեց. . . ինձ վերայ չէ՞ արդեօք. ո՛չ, այդ աղախնու վերայ է բարկացած. է, ուրեմն նա առանց այն էլ բարկացած է: Աստուած իմ, մի՞թէ Աիդիան կ' զանդատուի: Քրոջը ձայնը ականջիս դիպաւ. . . Նս չէի լսում, թէ ինչ էր ասում նա. ինձ հասնում էին միայն նրոց ցած խօսակցութեան անորոշ ձայները. յետոյ յանկարծ որոտաց հօրս խիստ ձայնը:

« — Դմիտր, եկ այստեղ. . .

« Ես չ' շարժուեցի և կանգնած էի կիսակենդան.

« — Ե՛կ այստեղ, անպիտան երեխայ, երբ քեզ կանչում եմ, կրկին գոչեց հայրս, և ես լսեցի,

թէ ինչպես նա բռունցքով խփեց սեղանին:

« — Գնա՛մ, կարելի է աւելի լաւ լինի, մտածեցի ես և անհաւասար քայլերով դիմեցի սեղանատուն:

« — Դու մտաբերում ես, թէ ինչ ասացի քեզ, անպիտան երեխայ, աղաղակեց ինձ վերայ հայրս. ես խօսքս անպատճառ կ' կատարեմ. էյ, ով կայ, մի ճիպոտ տուէք ինձ:

« — Հաւանական է, որ Աիդիան առաջուց պատրաստել էր այն, որովհետեւ նոյն բոպէին աղախինը բերեց մի բարակ և երկար ճիպոտ:

« — Հայրի՛կ, հայրի՛կ, ների՛ր ինձ. այլ ևս չեմ անի, չեմ անի, խօսք եմ տալիս, չեմ անի. . . Աղաղակեցի ես, բռնելով հօրս ձեռքը: « — Դու արդէն բանի անգամ խօստացել ես հայրիկին ուղղուելը բայց մինչև անգամ չես էլ մտածում դրա մասին. խառնուեց Աիդիան: Նս հաւատացած եմ, որ եթէ Աիդիան չ' խօսէր, հայրս անպատճառ կ' ներէր.

« — Ո՛չ, պէտք է քեզ սովորեցնել, դու շատ ես լրբացել, պատասխանեց նա, հրեց ինձ և ճիպոտը ձեռքն առաւ: Տեսնելով, որ աղաչանքներս ինձ չեն փրկելու, ես մտածեցի փախչելով ազատ-

տուէր. Լիդիան այս նկատեց և բռնեց ձեռքիցս: Հայրս ինձ գցեց գահաւորակի վերայ և խփեց ճիւղոտով: Այս առաջին հարուածը ինձ կատարութեան հասցրեց: Ես սկսեցի գոռալ, քաշքշուէլ, կծոտել. հայրս սաստիկ բարկացաւ, խփեց մի քանի անգամ ևս. ես կարծում էի, որ ցաւից անկասկած կ' մեռնիմ:

« — Այ՛, դու սպանեցիր ինձ, մեռայ, մեռայ, գոռում էի ես անգիտակցաբար:

« — Հայրիկ, հոգեակ, մի՛ սպանիր Դմիտրին. աղաղակեց սաստիկ վախեցած Լիզան. երեխայի ձայնը ստիպեց հօրս ուշաբերուել: Նա վայր գցեց ճիւղոտը և շտապեց իւր առանձնասենեակը, թողնելով մեզ մենակ: Ես չեմ յիշում, թէ յետոյ ինչ եղաւ. ասում էին իբր թէ ես խելագարուածի նման, թէև ոչ որ ինձ չէր դիպչում, անդադար գոռում էի, պոկոտում մազերս և զլորվում էի յատակի վերայ: Արեջատէս բղաւերուց բեզարած, ես գնացի սենեակս՝ և ընկայ անկողնուս վերայ: Չեմ իմանում, քնած էի ես, թէ ուշաթափուած, բայց երբ բաց արի աչքերս, սենեակում մութն էր և հանդարտ: Իսկոյն ես չ' կարողացայ մտաբերել, թէ ինչ էր պատահել ինձ հետ,

բայց երբ յիշողութեանս մեջ կենդանացաւ մի քանի ժամ առաջ կատարուած պատկերը, և երբ ես ինձ ասացի «ես ծեծուած եմ» գարշելի բառերը, չեմ կարող արտայայտել, թէ ինձ աստիճան ամաչեցի. ես զգացի և՛ սաստիկ ամօթ և՛ ոխ. . . ոխ դէպի հայրս, քոյրս և ամբողջ մարդկութիւնը: Ես չէի զգջում իմ արարքներին համար, երբէք ես ցանկութիւն չունէի ուղղուելու, ընդհակառակը, ես դատում էի իմ մէջ, որ անարդար և խիստ են վարուել ինձ հետ և անպատճառ կամենում էի վրէժս լուծել նրանցից:

« — Ախ, դու չարահոգի, օձ Լիդիա. մտածում էի ես. երբ մեծանամ նրան անպատճառ, անպատճառ կ' թակեմ բազմութեան առաջ, փողոցում, կամ Ամանուային այգում. թող նա աւելի ամաչի: Իսկ հայրս մինչև հիմայ լաւ, բարի մարդ էր. ես նրան սիրում էի. իսկ հիմայ ես նրան ատում եմ. գիտեմ նա կրկին կ' ցանկանայ, որ ես իրան սիրեմ և յարգեմ, բայց ես այդ չեմ անի, չէ՛, չեմ անի, կեանքումս երբէք չ' պէտք է գգուեմ նրան, չ' պէտք է խօսիմ անգամ նրա հետ և հէնց որ մեծանամ, իսկոյն նրանից կ' հեռանամ, թող նա իւր ամենասիրելի Լիդիայի հետ ապրի. . .

« Այդ ընդհանր ննջարանիս դուռը բացուեցաւ և ես լսեցի հօրս ձայնը .

« — Դմիտր, սիրելիս, դու քնած ես :

« Այդ հօրս առաջուայ փաղաքշական, բարի ձայնն էր, բայց ես այնքան բարկացած էի, որ չ' կարողացայ պատասխանել նրան, լսեցի և քնած ձևացրի : Նա մի քանի ընդհանր կանգնեց իմ գլխավերևը, զգուշութեամբ մատները ձակատիս գրեց, երևի իմանալու, արդեօք ես ջերմ ունիմ, և յետոյ հազիւ լսելի քայլերով դուրս գնաց :

Հէնց որ նա դուրս գնաց, ես շտապով հանուեցի և մտայ անկողնուս մէջ : Աէս գիշերին, երբ արդէն սկսել էի ննջել, յանկարծ երկու փոքրիկ ձեռքեր ինձ քսուեցին, և ես լսեցի Լիզայի ցած ձայնը .

« — Սիրելիս, դու կենդանի՞ ես . . .

« Միայն Լիզայի վերայ ես բարկացած չէի, այդ վայրկեանին ես միայն նրան էի սիրում . . .

« Մի կողմ քաշուեցի և նրան տեղ տուի անկողնումս և վերմակով ծածկեցի նրա սառն ոտքերը :

« — Դմիտր, ես ինչքան վախենում էի, կար-

ծում էի, որ հայրիկը քեզ կ' սպանէ, ասում էր նա ինձ գրկելով :

« — Գիտես ինչու եմ մեզ անարգում, ծեծում, հողիս, աւելացրեց նա քիչ յետոյ . նրա համար, որ մենք որք ենք, մենք մայրիկ չունինք . եթէ ունենայինք, նա թոյլ չէր տալ, որ մեզ ծեծեն :

« Ես ևս համոզուած էի, որ մայրս երբէք թոյլ չէր տալ ինձ ծեծելու և յանկարծ, այնպէս խռճացի ես ինձ վերայ, որ արտասուքներս հեղեղի նման սկսեցին թափուել աչքերիցս : Կիզան նոյնպէս լաց եղաւ, փաթաթելով իւր փոքրիկ ձեռքերը իմ վզովս : Մենք այս դրութեամբ երկար թափում էինք աղի արցունքներ . . . »

— Խղճալի որբիկներ, արտասուքները սրբելով, բացականչեց Սօֆիա Իվանովնան . եթէ այդ դրութեան մէջ ձեզ հայրդ տեսնէր, անպատճառ ձեզ վերայ կ' խղճար և կաշխատէր, մի բանով փոխարինել ձեր մօր կորուստը :

« — Գուցէ, բայց հայրս չ' եկաւ, և մենք բաւականին լաց լինելուց յետոյ, սկսեցինք խօսել Լիզան նոյնպէս, ինչպէս ինքն ասում էր, Լիզային չէր սիրում, չէր սիրում և հօրս . նա

շատ վախկոտ աղջիկ էր, և դրա համար էլ երկուսից էլ վախենում էր: Մենք սկսեցինք թուել բոլոր այն պատիժները և յանդիմանութիւնները որոնք ստացել էինք նրանից, մի քանիսն էլ իհարկէ, մենք աւելացրինք, և սրանով մենք մեզ աւելի գրգռում էինք նրանց դէմ: Լուսադէմին Լիզան մտախոս հեռացաւ, և, յիշում եմ, որ քրնեւըցս առաջ ես արի հետեւեալ որոշումները, որոնք անխախտելի պէտք է մնային. «ատել Լիզային մինչև կեանքիս վերջը, չ' սիրել և մինչև անգամ չ' խօսել հօրս հետ, մինչև որ նա իւր անարդար պատժի համար ներողութիւն չ' խնդրէ:»

— Եւ դու կատարեցիր այդ որոշումներդ. հարցրեց կ'ինք:

« — Այո, հէնց հետեւեալ օրուանից սկսեցի կատարել դրանք: Սակայն, եթէ դրանք միմիայն որոշումներ լինէին, ես, իհարկէ, շուտով կ' մոռանայի, ինչպէս առհասարակ մանուկները մոռանում են իւրեանց բարի ու չար ցանկութիւնները, բայց իմը ոչ թէ լոկ ցանկութիւն, այլ սրտիս բուն զգացմունքն էր: Դէպի Լիզիան ունեցած իմ թշնամութիւնը ատելութեան փոխ-

ուեցաւ, իսկ դէպի հայրս ես չէի զգում այն գորովանքը, ինչ որ առաջ էի զգում: Նրեում էր, որ նոյն իսկ ինքն, հայրս, հասկանում էր, որ ես իրանից շատ եմ ներացած և կամենում էր, որ իրա հետ վարուիմ այնպէս, ինչպէս առաջ: Հէնց հետեւեալ օրը նա փորձեց կատակ անել և խաղալ ինձ հետ:

« — Հա՛, դու հիմայ կատակներ ես անում, ծիծաղում ես ինձ հետ, մտածում էի ես, իսկ եթէ կամքիդ հակառակ մի բան անեմ, դու կարծեմ, կրկին կ' գոռաս. «Ծիպոտ տուէք»: Ձէ, այդ վատ կատակներ են. հեռու, հեռու ինձանից:

« Եւ ես հօրս պատասխանում էի սառնութեամբ և նրանից հեռու էի փախչում: Այսպէս շարունակուեց ոչ թէ մէկ կամ երկու օր, այլ ամբողջ շաբաթներ, ամիսներ. . . Իմ սառնութիւնը զայրացնում էր հօրս: Նա ևս թողեց իւր քաղցր վարմունքը և ինձ հետ սկսեց խրատութեամբ և կոպտութեամբ վարուել: Մեր բարի, ազնիւ յարաբերութիւնները չբացան, կորան յաւիտեան. ես սկսեցի բոլորովին չ' սիրել և չ' հաւատալ հօրս: Նրբեմն ես յիշում էի նրա հետ

ունեցած ուրախ խաղերս և զուարճութիւններս, յիշում էի, թէ ինչպիսի ցնծութեամբ ընդունում էի նրանից ամեն մի զգուանք, և այդ անցեալը ինձ թվում էր մի վաղեմի երազ: Ես լալիս էի և ողբում այդ անդառնալի և զուարճալի երազը. . .

— Իսկ Լիզիային հաճելի էին ձեր այդպիսի սառն յարաբերութիւնները:

«— Այո, նրան հաճելի էին: Նա այնպէս էր համոզուած, որ հայրս ինձ երես էր տալիս և լըբացնում և ուրախ էր, որ հիմայ այդպէս խստութեամբ է վարվում հետս: Տեսնելով, որ թէև յաճախ էր դանգատվում ինձ վերայ հօրս, բայց նա՝ իւր կամեցածի համաձայն խիստ չէր պատժում ինձ, քոյրս հնարում էր ուրիշ պատիժներ. ինձ ստիպում էր ձաշել խոհանոցում, աղախնու հետ, տօն օրերին նոր հագուստներ չէր տալիս, փակում էր ինձ մի մութ սենեակի մէջ, և այն: Բոլոր այս պատիժները ես տանում էի ամենայն համբերութեամբ և սառնասրտութեամբ և աշխատում էի ցոյց տալ Լիզիային որ ոչնչի տեղ եմ դնում նրանից ստացած պատիժները: Կարծում էի, որ նա ՚ի սրտէ ցանկա-

նում էր տեսնել իմ չարչարանքներս, որ իմ արտասուքներս և վիշտս նրան բաւականութիւն էին պատճառում, և ես դիտմամբ արտաքուստ ձեւացնում էի, որ պատիժներն ինձ հաճելի են: Եւ նչ լաւ է խոհանոցում ձաշել, ասում էի ես՝ դասս չ' պատրաստելու համար, աղախնու հետ խոհանոցում ձաշելուց յետոյ. այնպիսի համեղ կերակուր տուեց ինձ Մարտինան, որ ես կեանքումս կերած չէի:»

«— Ի՞նչ է ձանձրացար մթութեան մէջ նստելուց. բանալով բանտիս դռները հարցնում էր Լիզիան:

«— Ձանձրանալ, ի՞նչ ես ասում, ծիծաղերես պատասխանում էի ես նրան. ես ուրախ կ' լինիմ ամբողջ օրերով նստել այստեղ. ես ինձ համար մի հիանալի խաղ հնարեցի:

« Լիզիայի այս տեսակ հարցմունքները ինձ սաստիկ վշտացնում էին և ամեն դէպքում ես ցանկանում էի նրան չարչարել և վնասել: Ես դիտէի, որ մեր հագուստները նա ինքն էր կարում. այս աշխատութիւնը նա սաստիկ աւուում էր, և դրա համար ես դիտմամբ պատառում կամ մկրատով կտրատում էի անդրավարտիքս

կամ շապիկա: Լիդիան սիրում էր լուր զրբերը կարգով շարել: Ես յաճախ նրանց վերայ թանաք էի թափում և լցնում սեղանի վերայ և այն: Ես տեսնում էի, որ, երբ նա մի դժուար դաս պէտք է սովորէր, փակում էր ականջները մատնեով, որպէս զև մեր ձայները նրան չ' խանգարէին — և իսկոյն սարսափելի արմուկ էի բարձրացնում, երգում, զոռում, վազվզում և կատակներ էի անում Լիդայի հետ:

«— Ի՞նչ չար երեխայ ես դու, Դմիտր, ասում էր երբեմն Լիդիան. ես քեզ համար աշխատում, հոգում եմ, որ դու միշտ դասերդ լաւ պատրաստես, իսկ դու կէս ժամ ինձ հանգիստ պարապելու չես թողնում:

« Այդ բոպէին ես սաստիկ ամաչում էի. «Իսկապէս, ես ինչո՞ւ այսքան չար եմ.» մտածում էի ես. բայց այստեղ իմ մէջ զարթնում էր մի ուրիշ միտք. «նա ինքն է չար. նա՛ արաւ, որ հայրըս ինձ այլ ևս չի սիրում, նա աշխատում է, որ ինձ պատժեն միշտ: Հարկաւոր չէ ինձ նրա հոգատարութիւնը. թող նա ինձ հանգիստ թողնէ միայն. նա է ինձ նեղացնում, ես էլ նրան պէտք է նեղացնեմ:» Սօրս կենդանութեան ժա-

մանակ ես մի բարի, զգայուն երեխայ էի, բայց նրա մահուանից յետոյ տնային դաստիարակութիւնս ինձ չար և դիւրագրգիռ արաւ այնպէս, որ ես ամեն բոպէ պատրաստ էի վնասել ուրիշին: Լիդիան առհասարակ իմ բոլոր վատ արարքներս պատմում էր մեր տուն յաջատու ազգականներին և ծանօթներին: Նրանք բոլոր ինձ ըսկսեցին նայել այնպէս, ինչպէս մի անպիտան երեխայի վերայ և ավստում էին քրոջս, որ նա ստիպուած է չարչարուել ինձ կրթելու համար: Ազգականներիցս մի քանիսը սկսում էին ինձ խրատել, ասում էին, որ քոյրս փոխարինում է մօրդ, խորհուրդ էին տալիս յարգել և սիրել նրան: Զանձրալի էր ինձ լսել այդ խորհուրդները. «բոլոր վին մօրս չի փոխարինում դա. պատասխանում էի ես զայրացած. — չեմ կամենում սիրել նրան, և չպէտք է սիրեմ:» Ազգականներս հոգոց էին քաշում և ասում, որ ես ցնդուած երեխայ եմ. Լիդիան ևս հառաչում էր: Իհարկէ, նա, ում յայտնի չէր մեր տնային կեանքը և Լիդիայի վարմունքը, տեսնելով մեզ՝ երկուսիս՝ ինձ և Լիդիային, իսկոյն պէտք է ասէր, որ ես եմ մեղաւորը, իսկ նա արդարը: Նա կանոնաւոր, միջահասակ, երեսի դրա-

կան հայացքով, միշտ խաղաղ, քաղաքավարի դէպի ամեն անծանօթը՝ աղջնկ էր. հազնովում էր սովորաբար մաքուր և միշտ զբաղուած էր մի որ և է գործով. նա ամենի վերայ լաւ տպաւորութիւն էր թողնում: Իսկ ես այն ժամանակը մի լայնաթիկունք, տարուս համեմատ բարձրահասակ, միշտ անկանոն հազնուած խճճուած մազերով երեխայ էի: Ամեն լուսն պատրաստ էի ինքս ինձ յիմար ձեռացնել. ես իսկապէս մի փոքրիկ աւազակի էի նման:

— Բայց ինչու մի բան Վիզայի մասին չես պատմում. նա էլ այնպէս վատ էր ապրում, ինչպէս դու, հարցրեց Սօֆիա Իվանովնան:

« — Այո, կարելի է ասել, նոյնքան վատ. իւր բնաւորութեամբ ինձ բոլորովին նման չէր. ես ուրախ, զուարթ էի, իսկ նա հանդարտ էր և խելօք: Նա ամբողջ օրը զբաղուած էր լինում իւր փալաններով և ձայն չէր հանում. այնուամենայնիւ, Վիդիան նրա հետ ևս այնպէս էր վարվում, ինչպէս և ինձ հետ: Այդ խստութիւնը մի անգամից վախեցրել էր խեղճ աղջկանը, նրա մտքից անգամ չէր անցնում Վիդիայի կամբքին մի հակառակ բան անել, այլ նրան հպա-

տակում էր և կատարում նրա բոլոր հրամանները: Այս Վիդիային շատ հաճելի էր. նա աւաւտից մինչև երեկոյ խեղճին մի քայլ անգամ ազատ փոխելու թոյլ չէր տալիս: Վիզան պարտաւոր էր վեր կենալ և պառկել քնելու նոյն լուսնին, երբ կ' հրամայէր Վիդիան, ուտել ուղեղ այնքան, որքան լցրած էր նրա ափսէյում, խաղալ այն խաղաղքներով, որով թոյլ էր տրվում և այնքան ժամանակ, ինչքան կամենում էր մեծքոյրը: Ամեն հրաման, ինչ որ դուրս գար Վիդիայի բերանից Վիզան անպատճառ պէտք է կատարէր:

« — Վիզն, ինչո՞ւ խամաճուկդ մերկացրիր. այդ յիմար խաղ է, հագցրու նոր հագուստները. ասում էր Վիդիան, և մանուկը շտապում էր կատարել այդ հրամանը, թէև նրա դէմքը տխրում էր և, երևում էր, որ նրա խաղը խանգարուեց: «Վիզն, արի ինձ մօտ պատկերներ տես:» Վիզան գնում էր տեսնելու, բայց դրբա նրան չէին գրաւում: Փոքր քոյրս ինձ շատ էր սիրում, որովհետև ես նրա համար նոր խաղեր էի հնարում, և չափից դուրս ուրախանում էր, երբ երկուսիս միայնակ էին թողնում. բայց այդպիսի դէպքեր

շատ քիչ էին պատահում:

«— Դժվարը վատ երեխայ է, սովորաբար Լիզային ասում էր Լիզիան. թող նա մենակ խաղայ, իսկ դու իմ մօտս նստիր:

«— Ձեմ, ես ուզում եմ Դժվարի հետ խաղալ, թող տուր, քոյրիկ, աղերսում էր խեղճ աղջիկը:

«— Փոքրիկ աղջիկները «ուզում եմ» չ' պետք է ասեն. նրանք պետք է կատարեն այն, ինչ որ նրանց հրամայում են մեծերը. նկատում էր Լիզիան. այստեղ եկ և չ' խօսիս, ահա քեզ մատիտ և թուղթ, նկարիր:

« Լիզան ակամայից վերցնում էր մատիտը և միշտ նայում էր այն կողմը, որտեղ ես դիտամամբ զանազան նշաններ էի անում նրա ուշադրութիւնը դէպի ինձ գրաւելու համար:

«— Լիզա, արդէն խիստ ձայնով ասում էր Լիզիան. չէ որ ես քեզ հրամայեցի նկարել և ոչ թէ Դժվարին նայել. եթէ դու միւս անգամ ևս նայես նորա վերայ, կ' պատժուիս: Խեղճ աղջիկը համբերել չէր կարող. թուղթը մի քիչ կեղտոտելուց յետոյ, նա զաղանի կերպով գլուխը դարձնում էր դէպի ինձ: Այս զանցառութեանը

հետևում էր խիստ յանդիմանութիւն և պատիժ: Նրան պատժելը շատ հեշտ էր. մի փոքրիկ զրկանքն անգամ նրան վիշտ էր պատճառում, ստիպում էր նրան շուտով լաց լինել:

«— Նստիր այս աթոռի վերայ, և չ' համարձակուիս իջնել, մինչև որ ես չ' հրամայեմ քեզ, ասում էր նրան Լիզիան: Ուրիշ անգամ Լիզան ինքը շատ երկար ժամանակ առանց շարժուելու նստում էր, բայց իբրև պատիժ նստել և չ' շարժուել նրա համար իսկական տանջանք էր: Նա սկսում էր լաց լինել և ողբաձայն թողութիւն խնդրել, բայց Լիզիան իւր սովորութեան համաձայն մնում էր անյողզող:

«— Դադարիր լալուց և հանդարտ նստիր. ես ինքս քեզանից լաւ գիտեմ քեզ ներելու ժամանակը: Խեղճ աղջիկը ստիպուած էր նստել երկու—երեք րոպէ՞ ժամ անշարժ: Ես պաշտպանում էի բրոջս, սկսում էի հայհոյել Լիզիային և համոզում էի Լիզային նրան չ' լսել և զալ ինձ հետ խաղալու. սրա փոխարէն ես ևս շատ անգամ ըստիպուած էի լինում կրելու մի որևիցէ պատիժ, իսկ շատ անգամ Լիզիան ստիպում էր նրան ինձ ասել. «խնդրում եմ ինձ մի' պաշտպանիր, եթէ ոչ

քոյրիկս քեզ աւելի խիստ կ' պատժէ. դու վատ երեխայ ես, ես չեմ կամենում լսել և նմանել քեզ», կամ մի ուրիշ յանդիմանութիւն՝ նոյն մտքով: Լիզան խոնարհութեամբ կրկնում էր այդ խօսքերը. նա երբեմն, Լիզիայի հրամանի համաձայն, ամբողջ օրը չէր խօսում ինձ հետ և մինչև անգամ չէր նայում ինձ. բայց այս բանը նրա համար շատ ծանր էր. հէնց որ Լիզիան դուրս էր գնում, նա վազում էր ինձ մօտ և սկսում էր զգուել, անուանում էր ինձ իւր սիրելի եղբայրը, ես էլ սիրով պատասխանում էի նրա փաղաքշանքներին, թէև ինձ բարկացնում էր այն, որ նա գաղտնի կերպով էր մօտենում ինձ:

« — Դու ևս Լիզիայի նման ես, Լիզա՛, ասում էի նրան. ոչ ոք մեզ չի կարող արգելել սիրելու մէկ զմէկու և խաղալու միասին, եթէ դու կամենաս. մտաբերում ես, մայրիկը միշտ մեզ հրամայում էր սիրով լինել:

« — Իսկ Լիզիան թոյլ չի տալես, պատասխանում էր աղջիկը, շուրջը նայելով, թէ արդեօք չէ լսում Լիզիան. պէտք է լսել նրան, Դմիտր, նա խստասիրտ է, կ' պատժէ:

« Պատժից ազատուելու համար խեղճը պատ-

րաստ էր ամեն ինչ անելու. նա շատ ամուչկոտ էր և հիւբերի մօտ խօսելիս միշտ կարմրում էր: Չ' նայելով սորան նա Լիզիայի հրամանով շատ անգամ ստիպուած էր լինում երգել, առականր ասել: Բացի ինձանից նա ոչ ոքի չէր սիրում, որովհետև հայրս նրա վերայ քիչ ուշադրութիւն էր դարձնում, իսկ քրոջիցս վախենում էր: Բայց պատժի ահից նա պատրաստ էր ինձ մեղադրել, քան թէ ինքը իւր արած չարութեան մէջ խոստովանուել: Մի անգամ, միտս է, Լիզիայի գրասեղանի մօտ նստած նայում էինք մի քանի պատկերների. մեծ քոյրս դուրս գնաց սենեակից. Լիզան շտապով կամենում էր ցոյց տալ իրան սաստիկ հետաքրքրող պատկերներից մէկը, շտապով շփրտեց նրանց և յանկարծ թեւը կպաւ թանաքամանին և թանաքը թափուեց Լիզիայի թողած բաց դռի վերայ:

« — Աստուած իմ, այս ի՞նչ արի, գոչեց նա դժուածի նման. Դմիտր, հոգիս, ՚ի սէր Աստուծոյ, Լիզիային ասա՛, որ դժու արիք այս, ես վախենում եմ նրանից, սաստիկ վախենում:

« Նա այնպէս էր դողդողում, որ ես համաձայնեցի այդ մեղքը ինձ վերայ առնել:

« — Այս ո՞վ արաւ, տեսներով իւր փշայած գլխքը, բարկութեամբ հարցրեց Լիզիան:

« — Դմիտրը, Դմիտրը արաւ, ես չարի, շտապեց արդարանալ Լիզան: Լիզիան հօրս զանգատուեց: Հայրս այդ օրը շատ բարկացած էր և սաստիկ հայհոյեց ինձ, ես լաց եղայ, Լիզան, տեսներով, որ իւր պատճառով ես յանդիմանութիւն ստացայ, ինքն էլ լաց եղաւ, բայց ձշմարիտը չ' խոստովանուեց: Շատ անգամ ես ազատոււմ էի նրան այս տեսակ պատիժներից: Բայց ես չէի հասկանում, որ ազատելով նրան պատիժներից, միւլենոյն ժամանակ նրան սաստիկ փեստում էի: Նա սովորում էր խաբել և ստել ամեն ինչ: Եթէր տարեկան Լիզան կարող էր խօսել ամեն տեսակ ստախօսութիւններ: Նա նկատել էր, որ Լիզիան սիրում է, որ իրան հիւրերի մօտ դովաբանեն, հետը խոնարհ խօսեն, և այս ամենը ձշմարտութեամբ կատարում էր: Ամեն մի կողմնակի մարդ կ' կարծէր, թէ նա իւր մեծ քրոջը պաշտում է: Երբ հիւրերից մէկը հարցնում էր նրան:

« — Ի՞նչ է, Լիզոչկա, բո՞քրքրիկդ բարի՞ է, դու սիրում ես նրան: Նա իսկոյն աժխոյժով պատասխանում էր.

« — Այո՛, շատ բարի է, ես նրան շատ եմ սիրում:

« — Եւ մայրիկիդ չե՞ս ակոսում: Հարունակում էր հիւրը:

« — Ինչո՞ւ ակոսում, Լիզիան իմ մայրիկի տեղն է, ասում էր աղջիկը: Ինձ դրա խօսքերը սաստիկ զայրացնում էին և, երբ նրա հետ մի անգամ միայնակ մնացիք, ես սկսեցի նրան հայհոյել և յանդիմանել:

« — Եթէ դու Լիզիային սիրում ես և չես ակոսում մայրիկին, դու իմ քոյրս չես:

« — Ա՛խ, Դմիտր, պատասխանում էր նա, ինչքան դու յիմարն ես. չե՞ որ ես դիտմամբ սուտ եմ խօսում, որ Լիզիան չ' բարկանայ և չ' պատժէ ինձ:

« — Բայց և այնպէս, դու ստախօս ես, ես բեղ չ' պէտք է սիրեմ. պնդում էի ես:

« Լիզան սկսում էր լաց լինել, համբուրել ձեռքերս և խնդրել, որ չ' բարկանամ իրա վերայ:

« — Դու տղայ ես, դու չես վախենում նրանից, իսկ ես աղջիկ եմ, նրանից վախենում եմ: Եւ ես վերջապէս, ներում էի նրան: «Սեղաւորը սա չէ, այլ Լիզիան է» մտածում էի ես: Երբ

մենք միայնակ էինք մնում, Լիզան ամեն տեսակ անէծքներ էր թափում Լիզիայի գլխին, իսկ նրա մօտ մի հակառակ խօսք անգամ չէր համարձակվում ասել: Երբեմն ինձ նրա մօտ գրուշացնում էր ասելով. «Դմիտր ինչքան յանդուգն ես խօսում մեծ քոյրիկի հետ», կամ. «Դմիտրը, ներողութիւն ինդրիր քոյրիկից, նա շատ բարի է, կ'ներէ քեզ»: Սյդպիսի նկատողութիւնները ինձ համբերութիւնից հանում և կատաղեցնում էին: Ես սկսում էի հազար ու մի տեսակ հայհոյանքներ թափել նրա գլխին, մինչև որ նա լաց էր լինում: Չ'նայելով մեր այս վէճերին, չ'նայելով, որ Լիզայի բնաւորութիւնը ինձ հաճելի չէր, այնուամենայնիւ ես նրան սիրում էի և գիտէի, որ նա էլ ինձ է սիրում:

« Լիզային գրել և կարդալ ինքը Լիզիան էր սովորեցնում: Ձեռք իմանում յանձանքը աշակերտուհուն էր, թէ վարժուհունը, որ ուսումը շատ դանդաղ էր առաջ գնում: Գուցէ, եթէ Լիզիան քիչ համբերութիւն ունենար, արդիւնքը մեծ լինէր, բայց նա գործը սկսեց իւր սովորական խստասրտութեամբ: Մի ամենաչնչին սխալի համար Լիզան պատժվում էր: Դրա համար էլ

կարդալը շատ էր ատում:

« — Գիտես, Դմիտր, ասում էր նա ինձ շատ անգամ, եթէ ես թագաւոր լինէի, կ'հրամայէի բոլոր, բոլոր գրքերը վառել և սպանել աշխարհիս բոլոր վարժուհիներին:

« Ես, ընդհակառակը կարդալ շատ էի սիրում և կամենում էի հաւատացնել նրան, որ ամեն բան կարդալով միայն կարելի է գիտնալ և սովորել:

« — Ոչ սխալվում ես, աւելի լաւ է ոչինչ չ'գիտնալ, քան կարդալով սովորել, սխալում էր Լիզան:

« Չզուեղի դասերից պատուելու համար, Լիզան զանազան խորամանկութիւններ էր գործադրում. երբեմն նա հիւանդ էր ձեւանում և պառկում էր մի քանի ժամ, մինչև դասի ժամանակն անցնում էր, երբեմն հիւրերից մէկին խնդրում էր մնալ ամբողջ օրը մեր տանը, որովհետև հիւրի մօտ դաս պատրաստել անկարելի էր: Արտաբուստ Լիզան ինձանից լաւ էր երևում. նա հանդարտ, խելօք, լսող էր, բայց իսկապէս նրա պակասութիւնները աւելի շատ էին. ստախօսութիւնը և խորամանկութիւնը նրանում սկսեց աճել և զարգանալ, իսկ ես չար, վռէժխնդիր և

դիրագրգիւ էի. մենք այսպէս էլ մեծանում էինք: Մեզանում այս ամենը առաջացան միայն նրանից, որ Լիդիան չէր կամենում մեզ բարի, սիրող քոյր լինել, այլ ցանկանում էր անպատճառ խստասիրտ վերակացուհւոյ դեր խաղալ: Այս տեսակ դաստիարակութիւնը Լիզային արդեօք դեպի ո՞ր կ' տանէր, չէի իմանում, միայն ինձ հազն թէ չ' ստիպեց գործել մի սարսափելի, դժոխային գործ. . .

« Ես տասը տարեկան էի, երբ յանկարծ Լիդիան վտանգաւոր կերպով հիւանդացաւ: Հրաւիրեցին բժիշկ, նա զննեց հիւանդին, դեղ նշանակեց և յետոյ, մոնելով այն սենեակը, որտեղ ես և Լիզան խաղում էինք, լուրջ կերպով մեզ ասաց. « Ձեր քոյրը սաստիկ հիւանդ է, նրան շատ հարկաւոր է հանգստութիւն. ամենափոքր վրդովմունքն անգամ նրան կարող է վնասել. դուք պէտք է հանդարտ խաղաք և աղմուկ չ' անեք:»

« Բժշկի այս լուրջ խօսակցութիւնը մեզ վերայ մեծ տպաւորութիւն թողեց. մենք ամբողջ օրը բոլորովին հանդարտ էինք: Բայց երեկոյեան ես չ' կարողացայ համբերել և աղմուկ բարձրացրի: Այդ ժամանակ բժիշկը դարձեալ եկել էր բրոջս

այցելութեան. իմ բարձրացրած աղմուկը լսեց և եկաւ մեր սենեակը: Նա կանչեց ինձ իւր մօտ:

« — Լսիր, բարեկամ, ասաց նա ինձ. դու անկարծիք զիտես, որ երբեմն մայր ես ունեցել և նա մեռել է. ուրախ ես այդ բանի համար:»

« — Իհարկէ, ո՞չ, պատասխանեցի ես, զարմանալով այս օտարոտի հարցման վերայ:»

« — Ուրեմն ինչո՞ւ ես կամենում, որ քոյրիկդ նոյնպէս մեռնի. չէ՞ որ ես առաւօտեան քեզ ասացի, որ աղմուկը նրան կ' վնասէ, ուղղակի կը մեռցնէ նրան. դու ինքդ մտածիր, թէ որքան վատ կ' լինի քեզ, երբ կորցնես այս երկրորդ մօրդ. . .

« Բժիշկը գնաց. իսկ ես մտածութեան մէջ ընկայ:

« — Լիզն, հարցրի ես բրոջս, ինչպէս ես կարծում, լսո՞ւ կ' լինէր, եթէ մայրիկի տեղը Լիդիան մեռնէր:»

« — Կարծում եմ, որ լաւ կ' լինէր, պատասխանեց Լիզան. ասում ես, մայրիկը շատ բաշի է եղել, դուցէ նա ինձ այսքան չ' ստիպէր կարգալ, քեզ էլ չ' պատժէր:»

« — Այո՞, Լիզա, եթէ Լիդիան չ' լինէր հայ-Մեծ քոյրը:»

րիկը մեզ աւելի կ' սիրէր. ո՞վ պէտք է այն ժամանակը մեզ վերայ զանգատուէր հայրիկին:

« Մենք արդէն պառկած էիք մեր անկողինների մէջ, Լիզան այս խօսակցութեան ժամանակ քնեց, իսկ ես քնել չ' կարողացայ. կարծելով, որ առանց Լիզիայի աւելի երջանիկ կ' ապրիմ, ես ցանկանում էի, որ նա մեռնի: «Ամեն մի աղմուկ կարող է սպանել նրան» ասաց բժիշկը. և ի՞նչ բանից ասես, որ աղմուկ չ' բարձրանայ. յանկարծ մէկը վայր գլորէ աթոռը կամ սեղանը, կամ հայրս մոռացմամբ դռայ աղախնու վերայ, կամ մի օտար շուն մօտենայ դռանը և բարձր հաչէ. . . և ահա Լիզիան կ' մեռնի, նրան կ' թաղեն այնպէս, ինչպէս մօրս թաղեցին. ես կ' դնամ հօրս մօտ և կ' ասեմ. «Նա՞ վերայ այն գարշելի Լիզիան միշտ սուտ զանգատներ էր անում, այժմ նա չկայ, և ես քո մեծ որդին եմ, սիրի՛ր ինձ այնպէս, ինչպէս առաջ էիր սիրում. ես ևս քեզ այնպէս կ' սիրեմ:» Եւ ահա երեւակայութեան մէջ պատկերանում էին զանազան զուարճալի տեսարաններ: Ես և Լիզան իրար հետ շատ սիրով կ' ապրինք. նա այլ ևս ոչ ոքից չե վախենայ և վերջ կ' տայ ստախօսութեանը:

Հայրս, տեսնելով, որ մենք միշտ ուրախ ենք, կ' սիրէ և կ' զգուէ մեզ. այլ ևս մեր տանը վէճեր, կռիւներ, արտասուք չեն լինելու, ամեն ինչ զուրաթ. . . ամեն ինչ լաւ. . .

« Իմ այս քաղցր երազներս մի ձայն ընդհատեց. այդ ձայնը հօրս էր, որը աղախնուց հարեան սենեակում հարցնում էր. «Ի՞նչպէս է, լաւ է:»

« — Կարծես մի քիչ թեթեւացաւ, պատասխանեց աղախինը, տայ Աստուած, կ' առողջանայ:»

« — Կ' առողջանայ. . . գոչեցի ես. ուրեմն այն ուրախ կեանքը, որի մասին երազում էի, չ' պէտք է լինի, ուրեմն կրկին պէտք է սկսուին վէճերը, խառնակութիւնները, արտասուքները, զանգատները. . . Աստուած իմ, մի՛թէ մէկը մի աղմուկ, մի սարսափելի աղմուկ չ' պէտք է բարձրացնէ. . .

— Որ սպաննէ քրոջդ, Աստուած իմ, ինչ զարհուրելի բաներ եմ լսում, բացականչեց Սօֆիա Իվանովնան:

— Սպասիր, դեռ բոլորը չէ: Ասաց Դմիտր Իվանովիչը և շարունակեց.

Շուրջս ամեն ինչ խաղաղ էր: Ես դադարեցի յոյսս՝ գնեց մի անսովոր դիպուածի վերայ: «Չեմ կարող ես ինքս աղմուկ բարձրացնել», անց կացաւ մտքովս: Ես փորձեցի հեռացնել ինձանից այդ չար միտքը, բայց դա կրկին շրջում էր գրչխուռնս: «Ոչ ոք չի կարող խմանալ, որ ես դիտմամբ արի այդ. հաւատացնում էի ես ինձ. միայն Վիզան լսեց բժշկի ասածը. իսկ նա ինձ չի մասնիր:» Ինքս այրվում էր, մարմնովս մի դող անցաւ: Չար միտքը ինձ բոլորովին տիրեց, բայց ես այլ ևս չէի աշխատում նրան հասնել մտքիցս, այլ սկսեցի իմ զարհուրելի անելքի բոլոր մասնաբաժանութիւնները բննել. վաղը առաւօտեան հայրս կ' գնայ իւր պաշտօնին. աղախինը կը գնայ բաղար միս գնելու, Վիզան էլ ինչպէս այսօր, կ' գնայ հետը. տանը կ' մնայ միայն հիւանդին պահպանող կինը, նա էլ միշտ սենեակում չի նստում. հէնց որ նա դուրս գնաց, ես կ' վազեմ հիւանդի սենեակը, թմբուկս բարձր թրմբկահարեղով և աղաղակեղով, կ' մնամ այնտեղ միայն մի ըոպէ և յետոյ դուրս կ' փախչեմ: Վիզիան կ' մեռնի, բայց ոչ ոք չի խմանալ, որ ես դուրսնում մեղաւոր եմ. հայրիկը բիչ կ' լայ, բայց

շուտով վեշար կ' փարատէ, տեսնելով, որ մենք ուրախ ենք ապրում. Վիզան նոյնպէս կ' ուրախանայ, իսկ ես. . . իսկ ես. . . ես մարդասպան կ' դառնամ. . . Սյս միտքը սարսափեցրեց ինձ: «Ոչ, մխիթարում էի ես ինձ. մարդասպանները միշտ զանակով են մորթոտում, կամ ատրճանակով խփում և կամ թունաւորում. իսկ ես մի քիչ պէտք է թմբկահարեմ միայն, Վիզիան իւր ցաւից կ' մեռնի, միթէ ես սպանած կ' լինիմ նրան:

« Թէև այս մտքիս հետ ահ ու դողը պատեւ էր ինձ, բայց ես մտադրութիւնս փոխելու կամք չունէի, այլ ընդհակառակը, աւելի լաւ էի մշակում նրան: Վճռեցի, որ Վիզային խընդրեմ, որ աղախնու հետ անպատճառ գնայ բաղար, յետոյ թմբուկը ձեռքիս ես կ' պահուիմ Վիզիայի սենեակի դռան յետը, կ' սպասեմ մինչև կոտջ դուրս գնալը և. . . Մինչև հիմայ էլ սարսափում եմ այդ անիծեալ զիշերը յիշելիս: Ինքք երեւակայիր, Սօֆիա, մի տասնամեայ մանուկ մը տածում է իւր բրոջը սպանելու միջոցներ հընարել: Գնեցի լուսադէմին. որոշումներս անխախտ մնացին: Ես հաւատացած եմ, որ կ' կա-

տարէի դրանք, եթէ մի յարմար դէպք չ' խանգարէր ինձ: Երբ հետեւեալ առաւօտ զարթնեցի տեսայ հօրս, որ մի տոպրակի մէջ հաւաքում էր իմ և Լիզայի խաղալէքներս. պատճառն այն էր, որ Լիզիան գիշերը վատացել էր և վախենալով, որ մի դուցէ հետեւեալ օրը հիւանդին անհասկացտացնէր, նա վճռել էր մեզ մի քանի օրով ուղարկել իմ պառաւ տատիս մօտ:

« Ես ուրախացայ. «Ս, հիմայ լաւ կ' լինի. Լիզիան իմ պատճառովս չէ մեռնելու, նա ինքն իւր ցաւից կ' մեռնի:» Մեզ շուտով պատրաստեցին, և հայրս ինքը տարաւ տատիս մօտ, որը մեծ ուրախութեամբ մեզ ընդունեց. նա սկսեց հարց ու փորձ անել քրոջս հիւանդութեան մասին և, լսելով նրա դրութիւնը, սկսեց ողբալ նրա վերայ, ինչպէս արդէն մեռածի:

« — Խեղճ, դժբախտ աղջիկ, ասում էր նա, արտասուքները սրբելով, այդքան երիտասարդ նա մեռնում է. . . Խեղճը առանց մօր, առանց նրա գորովը և սէրը տեսնելու, մեռնում է օտար կնոջ ձեռքերի վերայ. . . վայժքեզ, գառնուկս, Լիզենկա. . .

« Ես նայեցի Լիզային, տեսայ, որ նա հեկե-

կում էր, և ես էլ խղճացի Լիզիայի վերայ. նա մեռնում է ծաղիկ հասակում, օտարի ձեռքերի վերայ. . . Տատս խղճում էր քրոջս վերայ, ցաւում էր նրան, իսկ եթէ իմանար իմ անցեալ գիշերուայ մտադրութիւնս, եթէ իմանար, որ ես, ինչպէս հիւանդի եղբայր, կամենայի դընայ նրա մօտ, ոչ թէ իմ սիրովս նրա քաշած տանջանքները թեթեւցնելու, այլ սպաննելու նրան. . .

« Ես զարհուրեցի. . . Վազեցի միւս սենեակը և սկսեցի հեկեկալ, ինքս էլ չեմ իմանում ինչու. ցաւում էի արդեօք Լիզիայի վերայ, զղջում էի նրա դէմ մտածածս չար խորհուրդներիս համար. . . Գիտենալով, որ ինքն էր մեր երկուսիս արտասուքներ թափելու պատճառը, տատս սկսեց մտիթարել մեզ:

« Երեք օր մեր տանից ոչ մի լուր չ' ստացանք: Մենք բոլորս Լիզիային արդէն մեռած էինք համարում: Չորրորդ օրը յանկարծ եկաւ հայրս, նրա երեսը թէև սփրանած էր, բայց աչքերի մէջ փայլում էր ուրախութիւն:

« — Դէհ, երեխայք, շնորհակալութիւն տուէք Ասածուն, մեր Լիզիան առողջանում է. վը-

տանգն անցաւ. բժիշկը ասաց, որ մի քանի օրից յետոյ նա կ' սկսի կազդուրուել:

« Տասու ջերմեռանդութեամբ խաչակնքեց և շնորհաւորեց հօրս, Կիզան թուշկոտում էր ուրախութիւնից. միայն ես շփոթուած և անշարժ կանգնած էի:

« — Ի՞նչ է պատահել քեզ, Դմիտր, մի՞թէ դու ուրախ չես. հարցրեց զարմացմամբ հայրս:

« — Ուրախ եմ, մեքենայաբար պատասխանեցի ես, թէ և ուրախութեան մի վոքը նշոյլ անգամ չէի զգում:

« Մի քանի օրից յետոյ Կիզիան կ' առողջանայ, մտածում էի ես, մենք կ' վերադառնանք տուն և ամեն ինչ առաջուայ ընթացքով կ' գնայ, Կիզիան կ' սկսէ իւր զանգատները, հայրս կ' բարկանայ, Կիզան կ' շարունակէ իւր ստախօսութիւնները, իսկ ես . . . ես գուցէ կրկին կամենամ մարդասպան լինել, ինչպէս այն գիշերը . . .

« Տատիս մօտ մնացինք մի ամբողջ ամիս: Հայրըս չ' կամեցաւ մեզ տանել տուն, մինչև Կիզիայի բոլորովին առողջանալը: Սովորաբար, եթէ երեխայքը երկար ժամանակ անջատուած են լի-

նում տանից, ուրախութեամբ են վերադառնում տուն: Բայց մենք շատ ցաւեցինք, որ բաժանվում էինք մեր բարի տատից: Տանը ամեն ինչ անփոփոխ էր մնացել: Կիզիան սաստիկ նիհարել և մեծացել էր:

« — Կարծեմ տատը ձեզ շատ երես է տուել շատ նա, երբ մենք գնացինք նրա հետ բարևելու. դարձեալ ես պէտք է չարչարուեմ ձեր ձեռքում:

« Կրկին սկսուեց մեր հին կեանքը: Հէնց առաջին օրը Կիզան դասը չ' կարողացաւ սովորել և պատժուեց, իսկ ինձ՝ քրոջս մի յանդիմանութեանը յանդուգն պատասխան տալու համար, հայրս դուրս արաւ ճաշի սեղանից: Օրէ օր իմ բանը վատանում էր. ես բոլորովին հօրս սիրելուց դադարեցի, իսկ Կիզիային իսկապէս ատում էի և ոչ մի յարմար դէպք բաց չէի թողնում առանց արտայայտելու իմ ատերութիւնըս: Բարեբաղդաբար, հէնց որ տասնութիւն տարիս լրացաւ, հայրս տուեց ինձ դիշերօթիկ աշակերտ գիմնազիւցում: Իմ ընտանեկան կեանքս սրանով վերջացաւ. անխորժ յիշողութիւններ միայն ես պատահեցի այդ կեանքիս վերաբեր-

մամբ: Մինչև անգամ տօն օրերը ես չէի կամե-
նում զնալ մեր տուն. ուսումնարանական կեանս,
քրս աւելի լաւ էի համարում քան անայինը. . .
Տանը բոլորը, բոլորը ինձ ատում են, բացի Լի-
զայից. միայն Լիզան էր որ կարծում էի, թէ
սիրում էր ինձ և իմ ներկայութիւնս միայն նը-
րան կուրախացնէ: Երբ հայրս նրան տուեց ճե-
մարան, ես բոլորովին դադարեցի տուն զնալ,
թէպէտ հրաւիրող էլ չկար: Հայրս համոզուած
էր, որ ես մի չար, անխրատ երեխայ եմ, և ոչ
մի զգացմունք չկայ իմ մէջ, իսկ քոյրս ուրախ
էր, որ իւր անային օրինակելի կարգ ու կանոնը
խանդարող չ' կար:

— Եւ դու մինչև հիմայ ատում ես Լիզի-
ային, հարցրեց ամուսնուն կինը:

— Ո՛չ, ո՛չ, ես նրան չեմ ատում: Այժմ ես
հասկանում եմ, որ նա մեզ վատութիւն անել
չէր կամենում, նա ցանկանում էր մեզ կրթել,
բայց որովհետեւ ինքն ևս մի անփորձ աղջեկ էր,
վարուելու կերպը չէր իմանում: Ո՛չ, ես նրան
չեմ ատում, թէպէտ նա ինձ շատ վնասներ տու-
եց. զրկեց ինձ հօրս սիրուց, նրա շնորհիւ իմ
բնաւորութեան մէջ զարգացաւ դիւրագրգռու-

թիւն և ատելութիւն: Ես արդէն վաղուց 'ի սրտէ
ներել եմ նրան, բայց սիրել նրան ես չեմ կա-
րող. նա ինձ համար բոլորովին օտար կինարմատ
է. նրա վշտերին ու ուրախութիւններին այնքան
կարող եմ վերաբերուել, որքան մի օտարի, բայց
ինչպէս նրա հարազատ եղբայր վերաբերուել,
անկարող եմ անել: Լիզան ասում էր, որ նոյնն
էլ նա ինքն է զգում:

— Խեղճ Լիզիա, մարդու չ' զնաց, չունի
իրա համար սափհական ընտանիք, իսկ իւր եղ-
բօր և քրոջ համար բոլորովին օտար է: Շատ
դժուար է խեղճին տանել այս ամենը. տխուր
ձայնով նկատեց Սօֆիա Իվանովնան:

Դմիտր Իվանովիչը պատասխանի տեղ հա-
ռաչեց:

Այդ բոպէին հօր բազկաթռուի յետեից ե-
րևեցաւ Մաշայի գլուխը. խեղճ աղջեկը վրդով-
ուած էր, և նրա այտերի վերայով գլորվում էին
արտասուքի կաթիլները:

— Ա՛յո ինչ է նշանակում, բացականչեց հայ-
րը, ճրտեղեց եկար:

— Հայրեկ, հոգիս, ներիր ինձ. խնդրեց աղ-
ջեկը. ես դուրս եկայ մայրիկին ասելու, որ ե-

րեկայքը չեն քննում, և լսեցի, որ դու մի բան ես պատմում մայրիկին, հետաքրքրութիւնս շարժուեց, կամեցայ լսել. . . դրա համար նստեցի յատակի վերայ և բոլորը լսեցի:

Դմիտր Իվանովիչը բարկութեամբ նայեց դրստեր վերայ և պատրաստվում էր նրան յանդիմանել, բայց Սոֆիա Իվանովնան մի հայացքով հանդարտեցրեց նրան:

— Ես հասկանում եմ, թէ ինչու դու այդքան հետաքրքրուեցար լսել հայրիկիդ պատմութիւնը, Մաշա. դու բոլորովին նման ես այն մեծ բրոջս, որի մասին պատմեց հայրիկդ: Եթէ ես եղբայրներիդ մեծանալուց առաջ մեռնիմ, դու գուցէ Կիզիայից լաւ չ' վարուես նրանց հետ:

— Մայրիկ, ես Միտեային և Պետեային սիրում եմ, կարմրելով ասաց Մաշան:

— Շատ կարելի է. բայց Կիզիան էլ էր սիրում իւր եղբորը և բրոջս: Բու հէնց հիմադ էլ, երբ տան մէջ մեծեր կան, որոնք կարող են զգուշացնել, որ չար գործեր չ' գործեն, կամենում ես նրանց վերայ իշխել հէնց դրանից կարելի է երևակայել, թէ ինչպէս կ' վարուիս նրանց հետ, երբ փոխարինես մորդ. . .

Մաշան երեսը ձեռքերով ծածկեց և լաց եղաւ: Սրդէն հօր պատմութիւնը սաստիկ ներգործել էր նրա վերայ. նա հասկացաւ մօր խօսքերի նշանակութիւնը և սաստիկ ամաչեց: Դմիտր Իվանովիչը տեսաւ, որ Մաշային իւր հետաքրքրութեան համար հարկաւոր չէր յանդիմանել և ասաց նրան.

— Մաշա, ես ուրախ եմ, որ այժմ դու լըսեցիր իմ մանկութեան պատմութիւնը և դիտեմ, որ դու չար սիրտ չունիս. դու անկարծիք չես ցանկալ, որ եղբայրներդ տանջուին այնպէս, ինչպէս ես, և երբ նրանք մեծանան ասեն. «մենք Մաշային ներում ենք այն չարութիւնները և դառնութիւնները, որ նա տուեց մեզ. բայց նրան, ինչպէս քոյր, չենք սիրում. նա մեզ համար օտար է:»

Վ Ե Ր Զ



The first part of the book is
 devoted to a general history of
 the world, from the beginning
 of time to the present day.
 It is written in a plain and
 simple style, and is intended
 for the use of schools and
 families.

The second part of the book
 contains a description of the
 different parts of the world,
 and of the various nations
 which inhabit them. It is
 written in a plain and simple
 style, and is intended for
 the use of schools and families.
 The third part of the book
 contains a description of the
 different parts of the world,
 and of the various nations
 which inhabit them. It is
 written in a plain and simple
 style, and is intended for
 the use of schools and families.



3242

2013

